ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

"1 " հունիսի 2012թ. № 36 -Ա

Ռ. ՂԱԶԱՐՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին կետով, Հայաստանի Հանրապետության «Պետական կառավարչական հիմնարկների մասին» 2001թ. հոկտեմբերի 23-ի ՀՕ-247 օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ կետի և Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 158-րդ,159-րդ և 161-րդ հոդվածների դրույթներով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 1997թվականի նոյեմբերի 5-ի «Մշտական հիմունքներով պետական և ծառայողական գաղտնիք կազմող տեղեկությունների օգտագործմամբ աշխատանքներ կատարող քաղաքացիների և այդպիսի գաղտնիքի պաշտպանության կառուցվածքային ստորաբաժանումների աշխատողներին հատկացվող արտոնությունների մասին» N 487 որոշման, **կ ա ր գ ա դ ր ում եմ՝**

1.ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավար Ռազմիկ Ղազարյանին տրամադրել ամենամյա նվազագույն արձակուրդի և լրացուցիչ արձակուրդի մասը՝ 2012թ.հունիսի 6- 25-ը ներառյալ (14 աշխատանքային օր):

Համաձայն «Քաղաքացիական ծառայողների վարձատրության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետի՝ վճարել լրացուցիչ միանվագ արձակուրդային վճար՝ իր միջին ամսական աշխատավարձի չափով:

2.Ռազմիկ Ղազարյանի՝ արձակուրդում գտնվելու ընթացքում աշխատակազմի ղեկավարի պարտականությունների կատարումը ժամանակավորապես դնել աշխատակազմի ղեկավարի տեղակալ Գրիգոր Թադևոսյանի վրա:

3.Աշխատակազմի ղեկավարին՝ ապահովել սույն կարգադրությունից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ**

2012թ.հունիսի 1
ք. Կապան